459 Ծնվեցիր, եկար աշխարհի մարմնով,

1. Ծնվեցիր, եկար աշխարհի մարմնով,
Որ կատարես կամքը մեր Սուրբ Հոր,
Որ ողջ մարդկության մեղքը Դու վերցնես,
Որ դեպի Հայրը մեզ ճամփա բացես:

Եվ ո՞վ կարող էր Քեզանից բացի
Գառան հեզությամբ գամվել այն խաչին:
Դու խաչին գամված՝ խնդրեցիր Հորից,
Որ ների մեղքերն Քեզ խաչողների:
Հա՛յր, ողորմեա՛ (3). ողորմեա՛ (2):

2. Տե՛ր, երբ գամեցին Քեզ խաչափայտին
Ու սուր գեղարդով կողդ խոցեցին,
Կյանքի աղբյուրը բխեց Քո կողից,
Որ մեզ մաքրում է բոլոր մեղքերից:

3. Համբարձվեցիր Դու երկինք՝ Հորդ մոտ,
Եվ ուղարկեցիր Սուրբ Հոգուն մեզ մոտ,
Ու հիմա, նստած Հորդ աջ կողմում,
Բարեխոսում ես և մեզ ազատում: